Հաշվետվություն

2025 թվականի փետրվարի 11-ից 13-ը Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Վարդան Օհանջանյան, Կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Թեհրան, փետրվարի 11-ից 13-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Իրանի Իսլամական Հանրապետության ազգային աշխարհագրական կազմակերպություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Աշխարհատարածական տվյալների ոլորտ. խելացի կառավարման հիմք» թեմայով Իրանի 4-րդ միջազգային աշխարհագրական ցուցահանդեսին:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման հիմնական թեմաներն էին.

- ✓ Երկրի հեռահար զոնդավորում,
- ✓ Գեոդեզիա, քարտեզագրություն,
- ✓ Հիդրոգրաֆիա (ջրագրություն),
- ✓ Օդերևութաբանություն և կլիմայագիտություն,
- ✓ Երկրաբանություն և օգտակար հանածոների հետախուզում,
- ✓ Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (GIS), ծրագրային ապահովումներ և սարքավորումներ,
- ✓ Օդային լուսանկարահանման քարտեզագրում, ինքնաթիռներ և անօդաչու թռչող սարքեր,
- ✓ Աշխարհագրություն, հողերի չափագրում և քաղաքաշինություն,

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Թեհրանում մեկնարկած «Iran Geo» 4-րդ միջազգային ցուցահանդեսին մասնակցում էին պաշտպանության նախարարության պաշտոնյաներ, կազմակերպությունների ղեկավարներ, համալսարանների և գեոմատիկայի ոլորտի մասնագետներ:

Ելույթ ունենալով բացման արարողության ժամանակ՝ ԻԻՀ պաշտպանության նախարարության աշխարհագրության կազմակերպության ղեկավար, բրիգադի գեներալ Մաջիդ Ֆախրին անդրադարձավ հիմնական գլոբալ մարտահրավերներին:

Նշվեց, որ կլիմայի փոփոխությունը, ջրային ռեսուրսների ճգնաժամերը, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, միգրացիան, աշխարհաքաղաքական մրցակցությունը, պարենային անվտանգությունը և երաշտը մարդկության առջև ծառացած ամենահրատապ խնդիրներից են:

Ըստ գեներալ Ֆախրիի՝ գլոբալ մարտահրավերների առնվազն 70 %-ը առնչվում է աշխարհագրությանը և պահանջվում է գտնել այնպիսի աշխարհագրական լուծումներ, որոնք կախված են ճշգրիտ և հուսալի տարածական տվյալներից, ինչպես նաև գեոդեզիական, ֆոտոգրամետրիայի, հեռահար զոնդավորման և գեոինֆորմատիկայի առաջընթացներից:

Ցուցահանդեսի ժամանակ կարևորվեց նաև աշխարհատարածական տեխնոլոգիաների աճող ինտեգրումը արհեստական բանականությանը, համացանցի և կապի տեխնոլոգիաներին:

«Աշխարհատարածական տվյալների ոլորտ. խելացի կառավարման հիմք» խորագրով ցուցահանդեսը համարվում է Արևմտյան Ասիայի աշխարհատարածական արդյունաբերության ամենամեծ հավաքը, որը նպաստում է գիտելիքի փոխանակմանը ոլորտի մասնագետների, հետազոտողների և քաղաքականություն մշակողների միջև:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած այցի շրջանակներում հանդիպեցի Իրանի պաշտպանության նախարարության աշխարհագրության կազմակերպության ղեկավար, բրիգադի գեներալ Մաջիդ Ֆախրիի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի և Իրանի մասնավոր ընկերությունների միջև համագործակցության հնարավորությունը:

Իրանցի գործընկերները ներկայացրին օրթոլուսանկարների ոլորտում իրականացված աշխատանքները՝ կիսելով իրենց փորձը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամությունը հետագա համագործակցության զարգացման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Վարդան Օհանջանյան 17.02.2025 թ.